EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
PRESS RELEASE

Կանադայում ՀՀ դեսպանությունը տեղեկացնում է, որ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը 2013թ. օգոստոսի 9-15-ը կազմակերպում է համահայկական երկու միջոցառում՝ Հայագիտական 6-րդ համահայկական օլիմպիադա և «Հայ առաքելական եկեղեցու պատմություն» թեմայով մրցույթ: Վերջինը կազմակերպվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի հետ համատեղ:

Միջոցառումների նպատակն է արտերկրի հայ համայնքներում հայագիտության խթանումը և դեռահասների համար հայրենիքն առավել ճանաչելի դարձնելը:

Կեցության բոլոր ծախսերը, ինչպես նաև շրջայցերի և միջոցառումների կազմակերպումը հոգում է հրավիրող կողմը, մասնակիցները հոգում են միայն ճանապարհածախսը:

Մրցույթին կարող են մասնակցել 14-18 տարեկան դպրոցականները:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել մինչև **ս.թ. հուլիսի 8-ը**:

Առդիր՝ 35թ.:

7 Delaware Avenue, Ottawa, Ontario K2P 0Z2
Telephone: 613 234-3710 Fax: 613 234-3444

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը 2013 թվականի օգոստոսի 9-15-ը Հայաստանում կազմակերպում է միաժամանակ երկու աշակերտական միջոցառում՝ Հայագիտական 6-րդ համահայկական օլիմպիադա և Հայ առաքելական եկեղեցու պատմության մրցույթ:

Միջոցառման նպատակն է՝ խթանել և խրախուսել հայոց լեզվի, հայ գրականության, հայոց պատմության և հայ մշակույթի իմացությունը, առողջ մրցակցության պայմաններում հնարավորություն տալ պատանիներին դրսևորել իրենց գիտելիքներն ու ստեղծագործական կարողությունները, նպաստել առավել շնորհալի պատանիների հայտնաբերմանը, ինչպես նաև ծանոթանալ տարբեր երկրներում բնակվող հասակակիցների հետ:

Օլիմպիադային և ՀԱԵ-ի պատմության մրցույթին կարող են մասնակցել 14-18 տարեկան անհրաժեշտ իմացություն ունեցող դպրոցականներ:

Մասնակիցները կարող են լինել հայերեն ուսուցմամբ վարժարանների և կրթօջախների /այդ թվում՝ միօրյա/ սաները, ինչպես նաև այլ դպրոցներ հաճախող հայ և օտարազգի պատանիներ:

Օլիմպիադան ընդգրկում է հարցեր հայոց լեզվից, գրականությունից, հայոց պատմությունից և հայ մշակույթի պատմությունից: Մասնակիցները պետք է կարողանան դրսևորել գիտելիքներ բոլոր ոլորտներից: Հայերեն լեզվին չտիրապետող կամ օտարազգի մասնակիցներն ազատվում են հայոց լեզվին վերաբերող հարցերից, սակայն հայ գրականության պատմության իմացության պահանջը մնում է ուժի մեջ:

ՀԱԵ-ի պատմության մրցույթը անցկացվելու է առանձնաբար՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի անմիջական հովանավորությամբ և աջակցությամբ:

Գրավոր փուլի մասնակիցներին տրվելու է մեկ միասնական՝ վերոնշյալ բոլոր ոլորտները ընդգրկող հարցարան: Հայերենի չտիրապետող և օտարազգի մասնակիցներին հարցարանը տրվելու է նրանց համար նախընտրելի լեզվով՝ առանց հայոց լեզվին վերաբերող առաջադրանքների:

Բանավոր փուլը անցկացվելու է երեք օր:

Առաջին օրը ստուգվելու են մասնակիցների գիտելիքները հայ գրականությունից՝ հարցատոմսի հարցերին բանավոր պատասխանի միջոցով:

Երկրորդ օրը ստուգվելու են մասնակիցների գիտելիքները հայոց պատմությունից և մշակույթից՝ բանավոր հարցերի միջոցով: Երկու օրերում կայացած մրցույթների արդյունքները գումարվելու են՝ հաղթողներին հայտարարելու համար:

Երրորդ օրը անցկացվելու է ՀԱԵ-ի պատմության մրցույթի բանավոր փուլը,_որը անցկացվելու է նույն առաջին փուլի հարցաշարով:

Հայագիտական 6-րդ օլիմպիադայի հաղթողների համար սահմանվել են 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի համապատասխանաբար՝ 3, 6 և 9 դիպլոմներ և մրցանակներ: Տրվելու են նաև խրախուսական մրցանակներ: ՀԱԵ-ի պատմության հաղթողները պարգևատրվելու են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից՝1-ին, 2-րդ և 3-րդ կարգի համապատասխանաբար՝ 2, 4 և 6 դիպլոմներով և մրցանակներով:

Հայագիտական 6-րդ համահայկական օլիմպիադայի մասնակիցների համար լրացուցիչ նախատեսվում են աստվածաբանության, ճարտասանության, հայկական երգի մրցույթներ, որոնց կարելի է մասնակցել ըստ ցանկության: Այս մրցույթներում հաղթողները կպարգևատրվեն պատվոգրերով և խրախուսական մրցանակներով:

Պատվիրակների համար նախատեսված են նաև տարաբնույթ մշակութային, ուսուցողական և ժամանցային միջոցառումներ:

Հնարավորության դեպքում, ցանկալի է օլիմպիադայի մասնակիցների միացյալ պատվիրակություն /խումբ/ ձևավորել ըստ երկրի կամ բնակավայրի՝ առավել բանիմաց թեկնածուների ընտրության և ներկայացուցիչներ ուղարկելու խնդիրը համակարգելու համար: Պատվիրակությունը /խումբը/ պետք է ունենա ղեկավար և մասնակիցների թվակազմի համեմատ ուղեկից/ներ/՝ մինչև 10 պատանու համար 1 ուղեկցող համամասնությամբ: Պատվիրակության /խմբի/ ղեկավարն իր նախընտրությամբ Երևանում կարող է համալրել համապատասխան մրցութային հանձնաժողովի կազմը:

Ձեռնարկներին համահայկական բնույթ հաղորդելու համար հայցում և ակնկալում ենք հայկական համայնքների, ազգային-հասարակական հաստատությունների և կազմակերպությունների, Թեմական և կրթական խորհուրդների հատուկ ուշադրությունն ու աջակցությունը: Ուրախ կլինենք բոլոր հայկական կրթօջախներից պատվիրակներ ընդունելու համար:

Օլիմպիադայի ընթացքում մասնակիցների, ղեկավարների և ուղեկցողների կեցության, սննդի և շրջագայության ծախսերը ստանձնում է Հայաստանի Հանրապետությունը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Ճանապարհածախսը հոգում են մասնակիցները կամ համապատասխան կազմակերպությունները, կրթօջախները, բարերարները:

Մասնակցության հայտերը պետք է լրացնեն պատվիրակությունների /խմբերի/ ղեկավարները և ՀՀ կրթության և գիտության նախարարություն փոխանցեն մինչև 2013 թվականի հուլիսի 8-ը ներառյալ: Իսկ մինչև օգոստոսի 1-ը հարկավոր է ուղարկել վերջնական հաստատում պատվիրակության կազմի և թվաքանակի վերաբերյալ՝ աշխատանքները պատշաճորեն կազմակերպելու նպատակով:

Օլիմպիադայի անցկացման կարգի վերաբերյալ ամփոփագիրը և պատրաստվելու համար անհրաժեշտ նյութերը, ինչպես նաև մասնակցության հայտաձևը կարելի է գտնել նաև Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության պաշտոնական www.edu.am կայքէջում:

Հավելյալ հարցերով կարելի է դիմել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն.

հեռ. +374 10 58-13-91
ֆաքս. +374 10 52-73-43
Էլ.փոստ. spyurq@yahoo.com, info@edu.am
Կայքէջ. www.edu.am

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
6-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օլիմպիադայի անցկացման ժամկետը.

Օլիմպիադան և նրա շրջանակներում առաջին անգամ անցկացվող Հայոց եկեղեցու պատմության մրցույթն (այնուհետև տեքստում պարզապես՝ Օլիմպիադա) անցկացվելու են 2013թ. օգոստոսի 9-15-ը: Բոլոր պատվիրակները պետք է հավաքվեն օգոստոսի 9-ին Հայաստանի Հանրապետության հրապարակում: Ժամը կհայտնենք լրացուցիչ:

Օլիմպիադայի մասնակիցները.

Օլիմպիադային կարող են մասնակցել 14-18 տարեկան անհրաժեշտ իմացություն ունեցող հայերեն ուսուցմամբ վարժարանների և կրթօջախների /այդ թվում՝ մեկօրյա/ սաները, ինչպես նաև՝ այլ դպրոցներ հաճախող հայ և օտարազգի պատանիներ:

Օլիմպիադային մասնակցելու համար դիմելու կարգը.

Օլիմպիադային դիմելու համար անհրաժեշտ է լրացնել մասնակցության հայտը և այն փոխանցել ՀՀ կրթության և գիտության նախարարություն մինչև 2013թ. հուլիսի 8-ը ներառյալ: Իսկ մինչև օգոստոսի 1-ը հարկավոր է ուղարկել վերջնական հաստատում՝ պատվիրակության կազմի և թվաքանակի վերաբերյալ:

Մասնակցության հայտերը պետք է լրացնեն պատվիրակությունների /խմբերի/ ղեկավարները: Ցանկալի է օլիմպիադայի մասնակիցների միացյալ պատվիրակություն /խումբ/ ձևավորել ըստ երկրի կամ բնակավայրի՝ առավել բանիմաց թեկնածուների ընտրության և ներկայացուցիչներ ուղարկելու խնդիրը համակարգելու համար: Բացի պատվիրակության /խմբի/ ղեկավարից պատվիրակությունը պետք է ունենա մասնակիցների թվակազմի համեմատ ուղեկից/ներ/՝ մինչև 10 պատանու համար 1 ուղեկցող համամասնությամբ:

Մասնակցության հայտը կարելի է փոխանցել ՀՀ կրթության և գիտության նախարարություն.

0010, Երևան, Գլխավոր պողոտա, Կառավարության 3-րդ շենք,
հեռ. +374 10 58-13-91
ֆաքս. +374 10 52-73-43
Էլ.փոստ. spyurq@yahoo.com, info@edu.am

Օլիմպիադայի ոլորտները.

Օլիմպիադան ընդգրկում է հարցեր հայոց լեզվից, գրականությունից, հայոց պատմությունից և հայ մշակույթի պատմությունից: Մասնակիցները պետք է կարողանան դրսևորել գիտելիքներ բոլոր ոլորտներից: Հայերեն լեզվին չտիրապետող կամ օտարազգի մասնակիցներն ազատվում են հայոց լեզվին վերաբերող հարցերից, սակայն հայ գրականության պատմության իմացության պահանջը մնում է ուժի մեջ: Նրանք կարող են ծանոթանալ գրական երկերի թարգմանություններին: Այս պարագայում մասնակիցները

պարտավոր են իմանալ միայն տվյալ լեզվով գոյություն ունեցող ստեղծագործությունները (կարդալ նրանց թարգմանությունները):

Հայոց եկեղեցու պատմության մրցույթը անցկացվելու է առանձնաբար՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի անմիջական հովանավորությամբ և աջակցությամբ:

Յուրաքանչյուր մասնակից կարող է մասնակցել կա՛մ միայն օլիմպիադային, կա՛մ մրցույթին, կա՛մ երկու միջոցառմանը միաժամանակ: Միայն օլիմպիադայի մասնակիցների համար Հայոց եկեղեցու պատմության հարցաշարի իմացությունը պարտադիր չէ: Ճիշտ այնպես, ինչպես Հայոց եկեղեցու պատմության մրցույթին մասնակցող պատանիների համար Հայագիտական օլիմպիադայի հարցաշարի իմացությունը պարտադիր չէ:

Օլիմպիադայի անցկացման կարգը.

Թե՛ Հայագիտական օլիմպիադան և թե՛ ՀԱԵ-ի պատմության մրցույթն անցկացվում են երկու փուլով՝ գրավոր և բանավոր:

Գրավոր փուլին մասնակցում են բոլոր պատանիները: Մասնակիցներին տրվելու են հարցարանային առաջադրանքներ: Հարցարանում ներառվելու են հարցեր հայոց լեզվից, հայ մշակույթի պատմությունից և հայոց պատմությունից:

Հայոց լեզվի հնարավոր առաջադրանքները և նմուշները (տե՛ս. «Հայոց լեզվի գրավոր առաջադրանքների տեսակները»), ինչպես նաև հայոց պատմության և հայ մշակույթի պատմության ամբողջական հարցաշար-շտեմարանը (տե՛ս. «Հայոց և մշակույթի պատմության հարցաշար») կցվում են: Հարցարանները կազմկվելու են հարցարան-շտեմարանում ընդգրկված բառացի կամ մասնակիորեն վերաձևակերպված հարցերով:

Հայերենի չտիրապետող կամ օտարազգի մասնակիցների համար թեստը տրվելու է իրենց համար նախընտրելի լեզվով՝ առանց հայոց լեզվին վերաբերող առաջադրանքների:

ՀԱԵ-ի պատմության հարցաշարը կազմված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի կողմից՝ ՀՀ հանրակրթական դպրոցներում կիրառվող «Հայող եկեղեցու պատմություն» առարկայի դասագրքերի հիման վրա: Բոլոր դասագրքերի էլեկտրոնային տարբերակները կարելի է գտնել ՀՀ կրթության և գիտության նախարարության Կրթության ազգային ինստիտուտի պաշտոնական http://lib.armedu.am կայքում՝

Գրավոր՝ առաջին փուլում լավագույն արդյունքները ցուցաբերած մասնակիցները կմասնակցեն երկրորդ բանավոր փուլին:

Հայագիտական օլիմպիադայի բանավոր փուլը բաղկացած է երկու մասից: Երկու մասերի գնահատականները գումարվելու են՝ բանավոր փուլի արդյունքներով լավագույններին որոշելու նպատակով:

Առաջին օրը ստուգվելու են երկրորդ փուլ անցած մասնակիցների գիտելիքները հայ գրականությունից: Մասնակիցը հարցաթերթիկ է վերցնելու, պատրաստվելու է մոտավորապես 15 րոպե (ժողովում է մտքերը, կառուցում է խոսքը. կարող է ինչ-ինչ գրառումներ անել) և հանդես է գալու ամբիոնից՝ բոլոր մասնակիցների ներկայությամբ: Մրցույթին նախապատրաստվելու համար կից ներկայացնում ենք կողմնորոշիչ ցանկը (տե՛ս «Հայ գրականության ուղեցույց»):

Հայերեն լեզվին չտիրապետող կամ օտարազգի մասնակիցները կարող են ծանոթանալ գրական երկերի թարգմանություններին: Այս պարագայում մասնակիցները

պարտավորվում են իմանալ միայն տվյալ լեզվով գոյություն ունեցող ստեղծագործությունները (կարդալ նրանց թարգմանությունները):

Երկրորդ օրը ստուգվելու են մասնակիցների գիտելիքները հայոց և հայ մշակույթի պատմությունից՝ բանավոր հարցերի և կարճ պատասխանների միջոցով: Հարցերը կարող են լինել ա/ տեքստային, բ/ լսողական կամ գ/ տեսողական բնույթի: Այս փուլում ընդգրկվելու են թե՛ նախորդ և թե՛ երկրորդ փուլի հարցեր: Առաջին փուլի հարցեր կարող են կրել փոփոխություններ և ընդարձակվել: Օրինակ՝

«*Ալեքսանդր Թամանյանի ո՞ր ստեղծագործությունն է 1937թ. Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում մեծ ոսկե մեդալ «Գրանտ Պրի» ստացել*» հարցից երկրորդ փուլում կարող բխել *«Ալեքսանդր Թամանյանի ո՞ր ստեղծագործությունն է պատկերված էկրանին»* հարցը: Որպես հուշում կարող է առաջարկվել «*Այս ստեղծագործությունը 1937թ. Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում ստացել է մեծ ոսկե մեդալ «Գրանտ Պրի»:*

Երրորդ օրը անցկացվելու է <u>ՀԱԵ-ի պատմության մրցույթի բանավոր փուլը,</u> առաջին փուլի նույն հարցաշարով:

Օլիմպիադայի նախասիրական մրցույթները.

Բացի հիմնական մրցույթներից միջոցառման շրջանակներում լրացուցիչ նախատեսվում են աստղագիտության, ճարտարապետության և հայրենասիրական երգի մրցույթներ, որոնց կարելի է մասնակցել ըստ ցանկության: Ճարտարապետի մրցույթի թեմաները նախապես չեն հրապարակվում: Մրցույթին պատրաստվելու համար կարելի է օգտվել 2009 թվականի տոմսերից:

Օլիմպիադայի մրցանակային տեղեր.

Հայագիտական օլիմպիադայի հիմնական հաղթողները հայտարարվում են երկրորդ փուլի արդյունքների հիման վրա: Հիմնական հաղթողների համար նախատեսված են.

I կարգ՝ 3 հատ
II կարգ՝ 6 հատ
III կարգ՝ 9 հատ դիպլոմներ և մրցանակներ:

Նախասիրական մրցույթների հաղթողները ստանալու են պատվոգրեր և մրցանակներ:

Սահմանված են նաև շնորհակալագրեր և խրախուսական մրցանակներ՝ օլիմպիադայի նախասիրական մրցույթների մասնակիցների համար:

ՀԱԵ-ի պատմության մրցույթում հաղթողների համար նախատեսված են
I կարգ՝ 2 հատ
II կարգ՝ 4 հատ
III կարգ՝ 6 հատ դիպլոմներ և մրցանակներ, որոնք տրվելու են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից:

Օլիմպիադայի ֆինանսավորումը.

Օլիմպիադայի ընթացքում մասնակիցների, ղեկավարների և ուղեկցողների կեցության, սննդի և շրջագայության ծախսերը ստանձնում է Հայաստանի Հանրապետությունը: Աջակից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Ճանապարհածախսը հոգում են մասնակիցները կամ համապատասխան կազմակերպությունները, կրթօջախները, բարերարները:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ-2011

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

Մասնակցության հայտը լրացնում է պատվիրակության /աշակերտական խմբի/ ղեկավարը

1. Ղեկավարի անձնական տվյալները

Անուն _____ Ազգանուն_____

Երկիր և բնակավայր_____

Աշխատանքի վայրը և պաշտոնը _____

_____

Կապի տվյալներ _____//_____
հեռախոսներ

E-mail /պարտադիր է/_____

2. Տեղեկություններ աշակերտական խմբի մասին

Ո՞ր երկրի /կամ բնակավայրի կամ տարածաշրջանի/ ներկայացուցիչներին եք ուղեկցում որպես ղեկավար _____

_____

Քանի՞ երեխա է ընդգրկված խմբում _____

Քանի՞ աղջիկ _____ Քանի՞ տղա _____

Քանի՞ երեխա է մասնակցում Հայագիտական օլիմպիադային _____

Քանի՞ երեխա է մասնակցում Հայոց եկեղեցու պատմության մրցույթին _____

Յուրաքանչյուր մասնակցի համար պատվիրակության /խմբի/ ղեկավարը լրացնում է հետևյալ տեղեկանքը

N ☐

Անուն _____ Ազգանուն _____

Բնակավայր _____
երկիր քաղաք/գյուղ

Ծննդյան տարին _____ Սեռը _____//_____
իգական արական

Հայկական կրթօջախը _____

_____

Մասնակցելու է.
Հայագիտական օլիմպիադային ☐ ՀԱԵ-ի պատմության մրցույթին ☐

Օլիմպիադային մասնակցելու է.
Հայերեն ☐ Ռուսերեն ☐ Անգլերեն ☐ Այլ _____

N ☐

Անուն _____ Ազգանուն _____

Բնակավայր _____
երկիր քաղաք/գյուղ

Ծննդյան տարին _____ Սեռը _____//_____
իգական արական

Հայկական կրթօջախը _____

_____

Մասնակցելու է.
Հայագիտական օլիմպիադային ☐ ՀԱԵ-ի պատմության մրցույթին ☐

Օլիմպիադային մասնակցելու է.
Հայերեն ☐ Ռուսերեն ☐ Անգլերեն ☐ Այլ _____

N ☐

Անուն _____ Ազգանուն _____

Բնակավայր _____
երկիր քաղաք/գյուղ

Ծննդյան տարին _____ Սեռը _____//_____
իգական արական

Հայկական կրթօջախը _____

_____

Մասնակցելու է.
Հայագիտական օլիմպիադային ☐ ՀԱԵ-ի պատմության մրցույթին ☐

Օլիմպիադային մասնակցելու է.
Հայերեն ☐ Ռուսերեն ☐ Անգլերեն ☐ Այլ _____

N ☐

Անուն _____ Ազգանուն _____

Բնակավայր _____
երկիր քաղաք/գյուղ

Ծննդյան տարին _____ Սեռը _____//_____
իգական արական

Հայկական կրթօջախը _____

_____

Մասնակցելու է.
Հայագիտական օլիմպիադային ☐ ՀԱԵ-ի պատմության մրցույթին ☐

Օլիմպիադային մասնակցելու է.
Հայերեն ☐ Ռուսերեն ☐ Անգլերեն ☐ Այլ _____

«_____» _____ 2013թ.

Ղեկավարի
տորագրություն _____

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

Ծ Ր Ա Գ Ի Ր

2013թ. օգոստոսի 9-15-ը

2013թ.

Երևան, 0010, Կառավարության 3 շենք, հեռ. 58-13-91, 52-73-43, E-mail. spyurq@yahoo.com, www. edu.am

I օր, 9 օգոստոս, ուրբաթ	
մինչև 13.00	Մասնակիցների դիմավորում Հանրապետության հրապարակում
13.00	**Հանդիսավոր բացում**
14.30	Մասնակիցների հաշվառում և տեղավորում
18.00-19.00	Ընթրիք
19.00-20.00	Աշխատանքային խորհրդակցություն՝ մրցութային հանձնաժողովների և խմբերի ղեկավարների մասնակցությամբ: Ծրագրի, մրցութային կարգի և պայմանների ներկայացում:
20.00-22.00	Մասնակիցների ծանոթացում, խմբակային խաղ
II օր, 10 օգոստոս, շաբաթ	
9.00-10.00	Նախաճաշ
10.00-14.00	I խումբ Հայագիտության գրավոր մրցույթ II խումբ Մշակութային ծրագիր
14.00-15.00	Ճաշ
15.00-18.00	Մշակութային ծրագիր
19.00-20.00	Ընթրիք
20.00-22.00	Հայկական երգի ուսուցում
III օր, 11 օգոստոս, կիրակի	
9.00-10.00	Նախաճաշ
10.00-12.00	II խումբ Հայոց եկեղեցու պատմության գրավոր մրցույթ I խումբ Մշակութային ծրագիր
14.00-15.00	Ճաշ
15.00-18.00	Մշակութային ծրագիր
19.00-20.00	Ընթրիք

20.00-22.00	Ասմունքի մրցույթ

IV օր, 12 օգոստոս, երկուշաբթի

9.00-10.00	Նախաճաշ
10.00-14.00	I խումբ Հայագիտական մրցույթի բանավոր փուլ /գրականություն/ II խումբ Մշակութային ծրագիր
14.00-15.00	Ճաշ
15.00-18.00	Ուսումնախաղարկային ծրագիր
19.00-20.00	Ընթրիք
20.00-22.00	“Պատանի ճարտասան” մրցույթ

V օր, 13 օգոստոս, երեքշաբթի,

9.00-10.00	Նախաճաշ
10.00-14.00	I խումբ Հայագիտական մրցույթի բանավոր փուլ /հայոց պատմություն, մշակույթ/ II խումբ Մշակութային ծրագիր
13.00-14.00	Ճաշ
14.00-19.00	Ժամանց
19.00-20.00	Ընթրիք
20.00-22.00	Հայրենասիրական երգի մրցույթ

VI օր, 14 օգոստոս, չորեքշաբթի

9.00-10.00	Նախաճաշ
10.00-13.00	II խումբ Հայոց եկեղեցու պատմության բանավոր մրցույթ I խումբ Մշակութային ծրագիր
13.00-14.00	Ճաշ

14.00-18.00	Մշակութային ծրագիր
18.00-19.00	Ընթրիք
20.00-22.00	Արդյունքների ամփոփում, երեկույթ

VII օր, 15 օգոստոս, հինգշաբթի

9.00-10.00	Նախաճաշ
10.00	Մեկնում
13.00-15.00	**Հանդիսավոր փակում**

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ

Հայոց լեզվից ունեցած գիտելիքներն ստուգվում են գրավոր հարցարանով՝ լեզվական տարատեսակ առաջադրանքների միջոցով:

Հարցարանը կազմվում է հայ դասական գրողներից մեկի հայտնի ստեղծագործության մեկ հատվածի հիման վրա:

Առաջադրանքները կարող են վերաբերել՝

- ✓ հոմանիշ, հականիշ բառերին (գրել այս կամ այն բառի հոմանիշը կամ հականիշը, շարքում գտնել ավելորդ՝ ոչ հոմանիշ բառը, նշել սխալ կազմված բառազույգ(եր)ը, դասավորել խառը տրված հոմանիշները, ո'ր հոմանիշն ինչ բառի հետ է կապակցություն կազմում և այլն),
- ✓ բառիմաստին (ընտրել բառի ճիշտ/սխալ իմաստը),
- ✓ բազմիմաստ բառերին (ընտրել բառի ճիշտ իմաստները),
- ✓ բառաիմաստային խմբերին (որ բառը չի մտնում բառային կամ իմաստային խմբի մեջ, որևէ բառ ավելացնել բառաիմաստային շարքին և այլն),
- ✓ բառակազմությանը (բառի բաղադրիչներից բառեր կազմել, տրված ածանցներով կամ արմատներով բառեր կազմել, նշել բառակազմական բաղադրիչները (ածանց, արմատ) և այլն),
- ✓ բառի գործածությանը (նախադասություն կազմելու միջոցով),
- ✓ դարձվածքներին, շրջասությանը, թևավոր խոսքերին,
- ✓ նախադասությանը (տեքստում առկա որևէ իրողության մասին նախադասություն կազմել),
- ✓ նախադասության հնչերանգին (հնչերանգային այս կամ այն տեսակին պատկանող նախադասություն կազմել),
- ✓ պարբերությանը (խառը տրված պարբերությունները դասավորել):

Մասնակիցները պատասխանները գրելու են հայերենի գրական երկու տարբերակներից որով կամենան՝ արևելահայերեն կամ արևմտահայերեն, իրենց սովորած ուղղագրությամբ՝ ավանդական կամ նոր:

ՆՄՈՒՇ 1

Կարդա' Գրիգոր Զոհրապի «Ճիտին պարտքը» նորավեպի հետևյալ հատվածը և կատարի'ր տրված առաջադրանքները:

Սեւ կաշիէ մեծկակ պայուսակ մըն էր զոր առտու իրիկուն իր ձեռքը բռնած կ'երթար փողոցներէն: Իր կեանքի անբաժան ընկերն էր այս տոկուն կաշիէ պարկը որով ամեն իրիկուն իր տան պիտոյքը, հացն ու միսը կը տանէր, կամ պտուղը իր երկու փոքրիկ զաւակներուն, որոնք դրան առջեւէն կը բոլորուէին խոստմնալից ու խոստմնապահ այս պայուսակին շուրջը:

Այս մարդուն բոլոր յոգնատանջ վաստակը ու քրտնաթոր գործունէութիւնը անոր մէջն էր, դանայեան տակառ զոր կը լեցնէր շարունակ երեսուն տարիներէ ի վեր առանց յաջողելու: Իր կեանքի պայքարը հոն էր ամբողջ, ապրուստի խնդիր, օրական հացի խնդիր, որուն արհաւիրքովը լեցուն էր միշտ այդ կաշիէ պահարանը իր մշտնջենական

պարապութեամբը. իր ուրախութիւնները ու ցաւերն ալ հոն էին, իր յիշատակներն ալ: Աղէկ օրերու գէշ օրեր ունէր այս տոպրակը. տիրոջը պէս ճակատագիր մը յարափոփոխ, եւ անոր պէս հոգի մըն ալ ունէր կարծես: Ո՞վ էր տէրը այս երկուքին մէջ. երեսուն տարի վերջը, երբ ձախորդութիւնը իր երկաթի շրջապտոյտ աղաղակներով զինքը կը պաշարէր, այս մարդը կը հասկնար որ այդ անզգա տոպրակը իր տէրը եղած էր միշտ:

1. Միևնույն հասկացությունն արտահայտող 5 բառ կա այս հատվածում. գտի'ր և գրի'ր դրանք:

   _____

2. Ի՞նչ է արհավիրքը:

   _____

3. **Առտու իրիկուն** բառակապակցության հոմանիշը դո'ւրս գրիր հատվածից:

   _____ _____

4. Գլխագիր **Տէր** բառն ի՞նչ է նշանակում:

   _____

5. Ի՞նչ է նշանակում **դանայան տակառ** արտահայտությունը: Այն ինչպե՞ս է առաջացել:

6. Հատվածից հականիշ բառերի մեկ զո'ւյգ դուրս գրիր:

   _____

7. Նույն բառով կազմված երկուական բառակապակցությո'ւն դուրս գրիր հատվածից:

   _____

8. **Մշտնջենական** բառը գործածի'ր նախադասության մեջ:

   _____

9. **Հաց** բառը փոխաբերական իմաստով գործածի'ր մեկ նախադասության մեջ:

   _____

10. **Պտուղ** բառը փոխաբերական իմաստով գործածի'ր մեկ նախադասության մեջ :

    _____

11. Ի՞նչ է հատվածում ներկայացված այս մարդու անունը:

    _____

ՆՄՈՒՇ 2

Կարդա՝ Հովհաննես Թումանյանի «Եղջերուի մահը» պատմվածքի հետևյալ հատվածը և կատարի՛ր տրված առաջադրանքները:

Անտառը հառաչանքով լիքն էր:

Աշնան չարագույժ ցրտերն ու անգութ որսկանները մտել էին նրա մեջ: Իր մահաբեր թույնը թափելով՝ սուլում էր դառնաշունչ քամին: Նրա շնչից գունատված տերևները դողդողում էին, անհասկանալի լեզվով ցավալի սվսվում, դալկանում, դեղնում ու իրանց-իրանց թափվում և թափվելով՝ տխուր շրշում, անզոր հառաչում էին: Այստեղ ու այնտեղ որոտում էր որսկանի հրացանի ձայնը, անտառը թնդում, արձագանք էր տալիս և ամեն արձագանք տալով կարծես թե ահագին ՝վա՛յ՝ էր կանչում իր խոր թավուտներից: Ճիշտ որ վա՛յ…

Կորչում էին նրա պայծառ օրերը, ընկնում էին նրա դալար զարդերը, հալածվում ու կոտորվում էին նրա սիրուն երեները, և … հառաչում էր նա: Չէ՞ որ նա էլ գիտե զգալ, չէ՞ որ այնտեղ էլ կենդանության շունչ կա, ցավ ու կսկիծ կա: Ահա վերջին տագնապի մեջ է անտառի գեղեցկուհին: Որսկանի ձեռքից փախած՝ նա վայր է ընկել: Գնդակատեղից դեռ հոսում է նրա արյունը, իր աչքով տեսնում է, զգում է այն սոսկալի փոփոխությունը, որ կատարվում է իր մեջ, իր շուրջն էլ փոփոխվում է, ինքն էլ այն չի, ինչ որ առավոտն էր… Բայց այս ի՞նչ զարհուրելի բան է: Ինչո՞ւ էլ այն չի, ինչո՞ւ էլ չի կարողանում կանգնել, փախչել… Օրհասական ջանքեր է անում, տանջվում է, տանջվում և ճգնում է պարզել, թե ախար ի՞նչ պատահեց, այն ի՞նչ էր… Եվ շփոթ ու աղոտ հիշում է, որ արածում էր իր հորթուկի հետ… հանկարծ մի բան որոտաց… մի տաքություն զգաց ու վայր ընկավ …

1. **Առավոտ** բառի հինգ հոմանի՛շ գրիր:

   _____

2. **Անգութ** բառի երկու հոմանի՛շ գրիր:

   _____

3. Հոմանիշ բառերի երեք զույգ ընտրի՛ր տրված հատվածից:

   _____

4. Ի՞նչ է նշանակում **երե** բառը:

   _____

5. Բացատրի՛ր **օրհասական** բառը :

   _____

6. Նույնարմատ ի՞նչ բառեր կան տեքստում: Գրի՛ր դրանք:

_____

7. Ի՞նչն է անտառի գեղեցկուհին:

_____

8. Հատվածից բարբառային-խոսակցական երկու իրողությո՛ւն դուրս գրիր: Նշի՛ր դրանց գրական համարժեքները:

_____

9. Գրի՛ր այն բառը, որ հոգնակի թվով է գործածվել ոճական նկատառումներով:

_____

10. **Եմ** բայի ո՞ր կիրառությունն է հակասում գրական լեզվի այսօրվա կանոնին:

_____

11. Հնչերանգային ի՞նչ տեսակի նախադասություններ կան տրված հատվածում:

_____

12. Ո՞ր հնչերանգի նախադասություն չկա տրված հատվածում: Գրի՛ր այդպիսի մեկ նախադասություն:

_____

13. Մեկական նախադասությո՛ւն կազմիր **շուրջ** և **շուրջը** բառերով:

_____

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Օլիմպիադայի մասնակիցները ընդհանուր գաղափար պետք է ունենան հայ գրականության պատմությունից, կարդացած պիտի լինեն ստորև նշված ստեղծագործությունները: Նրանք պետք է կարողանան տվյալ ստեղծագործության մասին խոսել, վերլուծել, համեմատել այլ ստեղծագործությունների հետ, սեփական կարծիք արտահայտել, վերաբերմունք դրսևորել£

Խրախուսելի է չափածո տողերի, հատվածների, ամբողջ ստեղծագործությունների անգիր իմացությունը (սակայն միայն դա բավարար չէ)£

1	**Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը**
1.1	Ազգային դպրություն ստեղծելու քաղաքական և պատմական անհրաժեշտությունը
2	Ոսկեդար: Հայ մատենագիրներ. ընդհանուր ակնարկ
2.1	**Մովսես Խորենացի. «Հայոց պատմություն»**
2.1.1	«Ողբը»
2.2.1	«Վահագն»
2.2.2	«Հայկ և Բել»
2.1.3	«Արա Գեղեցիկ և Շամիրամ»
2.1.4	«Արտաշես և Արտավազդ»
2.1.5	«Տիգրան և Աժդահակ»
3	**Գրիգոր Նարեկացի. կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**
3.1	Նարեկացու տաղերը
4	**Հայ միջնադարյան առակագրություն**
4.1	**Մխիթար Գոշ**
4.2	**Վարդան Այգեկցի**
5	**Նահապետ Քուչակ**
6	**Սայաթ-Նովա. կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**
7	**Հայ նոր գրականություն. Խաչատուր Աբովյան**
8	**Միքայել Նալբանդյան. կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**
8.1	«Իտալացի աղջկա երգը»
8.2	«Ազատություն»
8.3	«Մանկության օրեր»
9	**Պետրոս Դուրյան. ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**
9.1	«Սիրել»
9.2	«Դրժել»
9.3	«Լճակ»
9.4	«Իմ մահը»
9.5	«Տրտունջք»
10	**Հովհ. Թումանյան. գրական-հանրային գործունեությունը**
10.1	Ստեղծագործության ընդհանուր բնութագիրը
10.2	**Պոեմներ**
10.2.1	«Անուշ»
10.2.2	«Թմկաբերդի առումը»
10.2.3	«Լոռեցի Սաքոն»

10.2.4	«Սասունցի Դավիթ»
10.3	**Բալլադներ ու լեգենդներ**
10.3.1	«Ախթամար»
10.3.2	«Փարվանա»
10.3.3	«Աղավնու վանքը»
10.3.4	«Լուսավորչի կանթեղը»
10.3.5	«Թագավորն ու չարչին»
10.3.6	«Շունն ու կատուն»
10.3.7	«Մի կաթիլ մեղրը»
10.4	**Բանաստեղծություններ**
10.4.1	«Հայոց լեռներում»
10.4.2	«Հայրենիքիս հետ»
10.4.3	«Հոգեհանգիստ»
10.4.4	«Ա՛խ, ի՛նչ լավ են սարի վրա...»
10.4.5	Քառյակները
10.5	**Հեքիաթներ**
10.5.1	«Քաջ Նազար»
10.6	**Պատմվածքներ**
10.6.1	«Գիքորը»
10.6.2	«Երկու հայր»
11	**Ավետիք Իսահակյան. ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**
11.1	Սիրո երգեր
11.2	Հայրենիքի երգը
19.3	«Աբու-Լալա Մահարի»
13	**20-րդ դարի հայ գրականություն**
14	**Սիամանթո (Ատոմ Յարճանյան). ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**
15	**Ռուբեն Սևակ. ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**
16	**Դանիել Վարուժան. ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**
16.1	«Կարոտի նամակ»
16.2	«Հեթանոս երգեր»
16.3	«Հացին երգը»
17	**Լևոն Շանթ. ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**
17.1	«Հին աստվածներ»
18	**Միսաք Մեծարենց. ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**
18.1	«Զմռան պարզ գիշեր»
18.2	«Սիրերգ» (Գիշերն անոյշ է...)
18.3	«Աքասիաներու շուքին տակ»
18.4	«Նաւակները», «Մեղուները»
18.5	«Իրիկունը» (Սա իրիկունն ըլլայի ես...)
18.6	«Տո՛ւր ինծի, Տէ՛ր...»
19	**Վահան Տերյան. ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**
19.1	Քնարական շարքերը
19.2	«Տխրություն»
19.3	«Էստոնական երգ»

19.4	«Fatum»
19.5	«Աշնան մեղեդի»
19.6	«Քո աչքերի դեմ իմ աչքերը՝ կույր»
19.7	«Խաղաղ գիշերով դու կգաս ինձ մոտ»
19.8	«Հրաժեշտի խոսքերից»
19.9	«Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ...»
19.10	«Գարուն»
19.11	«Ցնորք» (Ինձ չես սիրում, ուրիշին...)
19.12	«Ոսկեհանդերձ եկար և միգասքող...»
19.13	«Երկու ուրվական»
19.14	«Կարուսել»
19.15	«Եթե սեր չկա – ինչի՞ համար»
19.16	«Դու կգաս ու կրկին հեքիաթով կդյութես»
19.17	«Հայրենիքում իմ արնաներկ»
19.18	«Դու հպարտ չես, իմ հայրենիք»
19.19	«Կարծես թե դարձել եմ ես տուն»
19.20	«Մի՞թե վերջին պոետն եմ ես»
19.21	«Բարակիրան նաիրուհին ինձ ժպտաց»
19.22	«Հրաժեշտի գազել»
19.23	«Մի' խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին...»
20	**Եղիշե Չարենց. ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**
20.1	«Տաղարան»
20.1.1	«Հայաստանին»
20.1.2	«Ես իմ անուշ Հայաստանի...»
20.2	«Մահվան տեսիլ»
21	**Շահան Շահնուր. ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**
21.1	«Նահանջը առանց երգի»
22	**Գուրգեն Մահարի. ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**
23	**Հովհաննես Շիրազ. ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**
23.1	«Հուշարձան մայրիկիս»
23.2	«Գարնանամուտ»
23.3	«Թագադրում»
23.4	«Հայ ժողովրդի երգը»
24	**Համո Սահյան. ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**
25	**Միլվա Կապուտիկյան. ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**
26	**Պարույր Սևակ. ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**
27	**Հրանտ Մաթևոսյան. ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**

Հիմնական հարցերից բացի մասնակցին լրացուցիչ հարցեր կարող են ուղղվել նյութին առնչվող մշակութային, գրապատմական իրողությունների վերաբերյալ (գրական խմբակներ, պարբերականներ, գրական երկերի թարգմանություն, հանրահայտ գրքերի առաջին հրատարակությունը, նկարազարդումներ, գրական երկերի հիման վրա ստեղծված երաժշտական ստեղծագործություններ, ֆիլմեր և այլն)£

Ի ՄԱԿԱՐԴԱԿ
(միայն գրավոր թեստի համար)

ՀԱՅՈՑ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

Հայոց պատմության հարցաշար

1. Ո՞րն է Հայկական լեռնաշխարհի բարձրագույն լեռնագագաթը:
2. Ո՞րն է Հայաստանի Հանրապետության բարձրագույն լեռնագագաթը:
3. Ըստ Մովսես Խորենացու կողմից գրի առնված հայերի ծագման մասին ավանդազրույցի՝ ո՞վ է հայ ժողովրդի նախնին:
4. Ո՞րն է առաջին պետական կազմավորումը Հայաստանում:
5. Ո՞ր դարերում է հիշատակվում Արմանի թագավորությունը:
6. Ո՞ր երկրի արձանագրություններում է հիշատակվում Հայասա թագավորությունը:
7. Ո՞վ է Ուրարտուի առաջին հիշատակված արքան:
8. Ո՞վ է հիմնել Տուշպա մայրաքաղաքը:
9. Ե՞րբ է կառավարել Մենուա արքան:
10. Ե՞րբ է թագավորել Արգիշտի 1-ինը:
11. Ո՞վ է հիմնել Էրեբունի քաղաքը:
12. Ե՞րբ է թագավորել Սարդուրի 2-րդը:
13. Ի՞նչ քաղաք է հիմնել Ռուսա 2-րդն Արարատյան դաշտում:
14. Մոտավորապես ո՞ր թվականներին է իշխել Երվանդ Սակավակյացը:
15. Ո՞վ էր Երվանդ Սակավակյացի որդին, որ դարձավ Հին Հայաստանի ամենանշանավոր արքաներից մեկը:
16. Ո՞վ էր Բաբելոնիայում ապստամբած հայազգի արքան ըստ Բեհիսթունյան արձանագրության:
17. Ո՞վ էր Հայաստանի սատրապը /կառավարիչը/ Ք.ա. 401 թվականին:
18. Ո՞ւմ գլխավորությամբ Մեծ Հայքը վերականգնեց անկախությունը Գավգամելայի ճակատամարտից (Ք.ա 331 թ.) հետո:
19. Ո՞վ էր Մեծ Հայքի արքան Ք.ա. 220-201 թվականներին:
20. Ո՞ր թվականներին է գահակալել Արտաշես I-ը:
21. Ե՞րբ է գահակալել Տիգրան II Մեծը:
22. Ե՞րբ է կնքվել Տիգրան II Մեծի և Միհրդատ VI Պոնտացու դաշինքը:
23. Ո՞ր թվականին Սելևկյան պետությունը մտավ Տիգրան Մեծի տերության մեջ:
24. Ե՞րբ ներխուժեց Լուկուլլոսը Հայաստան:

25. Ե՞րբ է տեղի ունեցել Արածանիի ճակատամարտը:
26. Ե՞րբ է Տիգրան Մեծը ստորագրել Արտաշատի պայմանագիրը Պոմպեոսի հետ:
27. Ե՞րբ է գահակալել Արտավազդ II-ը:
28. Ե՞րբ է գահակալել Արտավազդ II-որդի Արտաշես II-ը:
29. Ե՞րբ է իշխել Տիգրան III-ը:
30. Ո՞ւմ հետ է գահակից եղել Տիգրան IV արքան:
31. Որտե՞ղ տեղի ունեցավ Տրդատ I-ի թագադրությունը:
32. Ե՞րբ է Տրդատ I-ն իշխել որպես Մեծ Հայքի թագավոր:
33. Ո՞վ է հիմնել Վաղարշապատ մայրաքաղաքը:
34. Հին Հայաստանում ո՞ւմ էր պատկանում երկրի գերագույն իշխանությունը:
35. Ո՞վ էր Հին Հայաստանում երկրի հոգևոր առաջնորդը:
36. Ո՞րն էր երկրի ռազմական գործակալությունը:
37. Ինչպե՞ս էր կոչվում արքունի թիկնապահության գործակալությունը:
38. Ո՞վ է գրել Տիգրան Մեծի պատմությանը նվիրված ամբողջական գիրք:
39. Ըստ Ղևոնդ Ալիշանի հաշվարկի՝ ե՞րբ է սկզբնավորվել Հայոց Բուն տոմարը:
40. Ե՞րբ է իշխել Տրդատ III արքան:
41. Ո՞վ էր հայոց վերջին քրմապետը:
42. Ո՞ր քաղաքն է հիմնադրել Խոսրով Կոտակը:
43. Ե՞րբ է իշխել Արշակ 2-րդը:
44. Ի՞նչ քաղաքն է հիմնադրել Արշակ 2-րդը:
45. Ո՞ր ճակատամարտից հետո է Պապ թագավորը վերջնականապես հաստատվել Հայաստանի գահին:
46. Ո՞ր ժամանակաշրջանի դեպքերն է նկարագրում Փավստոս Բուզանդը:
47. Ո՞ր թվականին է Հայաստանն առաջին անգամ բաժանվել Հռոմի և Պարսկաստանի միջև:
48. Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Մեսրոպ Մաշտոցը:
49. Ո՞վ էր Մեսրոպ Մաշտոցին աջակցող հայոց արքան և կաթողիկառսը:
50. Ե՞րբ անկում ապրեց Արշակունյաց թագավորությունը Հայաստանում:
51. Ե՞րբ տեղի ունեցավ Ավարայրի ճակատամարտը:
52. Ո՞վ էր հայոց մարզպանը 481-484 թթ. ապստամբության սկզբում:
53. Ե՞րբ է տեղի ունեցել Ակռռիի ճակատամարտը:
54. Ե՞րբ է տեղի ունեցել Ներսեհապատի ճակատամարտը:
55. Ե՞րբ է կնքվել Նվարսակի հաշտության պայմանագիրը:

56. Ո՞ր թվականին է Հայաստանը երկրորդ անգամ բաժանվել Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև:
57. Որտե՞ղ է կնքվել 652 թ. հայ-արաբական պայմանագիրը:
58. Ե՞րբ ճանաչվեց Աշոտ I Բագրատունին թագավոր:
59. Ո՞վ է հաջորդել Աշոտ I Բագրատունի արքային:
60. Ո՞ր թվերին է իշխել Աշոտ II Երկաթ արքան:
61. Ո՞ւմ օրոք է Կարսը հռչակվել Բագրատունյաց կենտրոնական թագավորության մայրաքաղաք:
62. Ո՞ր թվերին է իշխել Աշոտ III Ողորմած արքան:
63. Բագրատունի ո՞ր արքան է իշխել 977-990 թվականներին:
64. Ո՞ր թվականներին է իշխել Գագիկ I Բագրատունի արքան:
65. Ո՞ր թվականին է կառուցվել Անիի Մայր տաճարը:
66. Ո՞ր էր զբաղեցնում երկրի Մեծ դատավորի պաշտոնը:
67. Ե՞րբ են Զաքարյաններն ազատագրել Անին սելջուկներից:
68. Ո՞ր թվականին է հիմնադրվել Ռուբինյան իշխանությունը Կիլիկիայում:
69. Ո՞ւմ օրոք է Սիսը դարձել Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք:
70. Ո՞ր թվականներին է իշխել Լևոն II-ը:
71. Ե՞րբ է տեղի ունեցել Կիլիկիայի հայոց թագավորության հռչակումը:
72. Ո՞ր թվականին Հեթումյանները հաստատվեցին Կիլիկյան Հայաստանի գահին:
73. Ե՞րբ է կնքվել հայ-մոնղոլական դաշնագիրը:
74. Ե՞րբ է անկում ապրել Կիլիկիո հայկական թագավորությունը:
75. Ո՞ր պատմիչն է գրել Արծրունյաց պատմությունը:
76. Ո՞վ է ստեղծել «Դատաստանագիրք» Կիլիկյան Հայաստանի համար:
77. 1701 թ. Հայաստանի ազատագրության նպատակով ո՞ւմ հետ հանդիպեց Իսրայել Օրին:
78. Ո՞վ էր ղեկավարում Սյունիքի ազատագական պայքարը 1722-1728 թթ.:
79. Ո՞վ էր ղեկավարում Սյունիքի ազատագական պայքարը Դավիթ Բեկի մահվանից հետո:
80. Վրաց ո՞ր թագավորի հետ էր համագործակցում Հովսեփ Էմինը:
81. Ո՞ր թվականին են Արևելյան Վրաստանի կազմում Ռուսաստանին միացել Լոռի-Փամբակը, Ղազախն ու Շամշադինը:
82. Ե՞րբ է կնքվել Գյուլիստանի պայմանագիրը:
83. Ո՞ր պայմանագրով ավարտվեց 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը:
84. Ե՞րբ է ստեղծվել Արմենական կուսակցությունը:

85. Որտե՞ղ է ստեղծվել Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը:

86. Ե՞րբ է ստեղծվել Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը:

87. Ո՞վ էր 1904 թ. Սասունի ինքնապաշտպանության Զինվորական մարմնի ղեկավարը:

88. Ո՞վ է ամենաբեղուն հայագետը:

89. Ե՞րբ է սկսվել Վանի 1915 թ. ինքնապաշտպանությունը:

90. Ո՞վ էր Ուրֆայի (Եդեսիայի) 1915 թ. ինքնապաշտպանության ղեկավարը:

91. Ո՞վ է Մուսա լեռան ինքնապաշտպանության մասին պատմող նշանավոր վեպի եղինակը:

92. Ո՞վ էր Երևանյան զորախմբի հրամանատարը 1918 թ. մայիսին:

93. Ե՞րբ տեղի ունեցավ Սարդարապատի ճակատամարտը:

94. Ո՞վ էր հայոց զորքի հրամանատարը Սարդարապատի ճակատամարտում:

95. Ո՞վ էր հայոց զորքի հրամանատարը Բաշ-Ապարանի ճակատամարտում:

96. Ե՞րբ հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը:

97. Ո՞վ էր Հայաստանի Հանրապետության (1918-1920 թթ.) առաջին վարչապետը:

98. Ե՞րբ է տեղի ունեցել Անկախ և միացյալ Հայաստանի հռչակումը:

99. Ե՞րբ է կնքվել Սևրի պայմանագիրը:

100. Ե՞րբ է ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը ստորագրել իրավարար վճիռը, որով որոշվում էր Թուրքիայի և Հայաստանի սահմանագիծը:

101. Ո՞վ էր ղեկավարում Սյունիքի ինքնապաշտպանությունը 1919 թ. հոկտեմբերից մինչև 1921 թ. ամառը:

102. Ե՞րբ է խորհրդայնացվել Հայաստանի Հանրապետությունը:

103. Ո՞ր տարածքն է անջատվել Հայաստանիվ 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով:

104. Ո՞ր կոնֆերանսի ժամանակ՝ թաղվեց՝ Հայկական հարցը:

105. Ե՞րբ է Լեռնային Ղարաբաղն անջատվել Խորհրդային Հայաստանից և կցվել Խորհրդային Ադրբեջանին:

106. Ո՞ր թվին է կատարել իր հայտնի վրիժառու գործողությունը Գուրգեն Յանիկյանը:

107. Ե՞րբ է հռչակվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

108. Ե՞րբ է տեղի ունեցել Հայաստանի Հանրապետության անկախության հանրաքվեն:

109. Ե՞րբ է ազատագրվել Շուշին:

110. Ե՞րբ է բացվել Լաչինի (Բերձորի) միջանցքը:

Հայ մշակույթի պատմության հարցաշար

111. Ո՞վ է խաղում Պեպոյի դերը հայկական առաջին հնչյուն կինոնկարում՝ «Պեպո»:

112. Ո՞վ է «Տժվժիկ» կինոնկարի ռեժիսորը:

113. Ո՞րն է հայկական մուլտիպլիկացիոն առաջին կինոնկարը:

114. Ինչպե՞ս է կոչվում Հայաստանում անցկացվող կինոնկարների միջազգային փառատոնը:

115. Ինչպե՞ս է կոչվում հայկական առաջին հնչյունային կինոնկարը:

116. Ու՞մ անունով է կոչվում «Հայֆիլմ»-ը:

117. Ո՞վ է «Նռան գույնը» ֆիլմի կինոբեմադրիչը և ու՞մ է նվիրված այն:

118. Հայաստանի ո՞ր մայրաքաղաքի տեղի ընտրությունը և հատակագծի կազմությունն է կատարել Հին աշխարհի նշանավոր զորավար Հաննիբալը:

119. Հայաստանի Դվին մայրաքաղաքը ո՞վ և ե՞րբ է հիմնադրել:

120. Էջմիածնի Մայր տաճարի առաջին գմբեթավոր եկեղեցին ո՞վ և ե՞րբ է կառուցել:

121. Զվարթնոցի տաճարը «Շինարար» անվանված հայ ո՞ր կաթողիկոսն է կառուցել և ո՞ր դարում:

122. Հայ ո՞ր ճարտարապետն է վերականգնել Կոնստանդնապոլսի Ս.Սոֆիա տաճարի գմբեթը, որը 1000 տարի անց կանգուն է մինչև օրս:

123. Անիի ո՞ր տաճարում է գտնվում Գագիկ Բագրատունի թագավորի արձանը՝ տաճարի մանրակերտը ձեռքին:

124. Ո՞վ է միջնադարյան Հայաստանի այն նշանավոր ստեղծագործողը, որը միաժամանակ և՛ ճարտարապետ էր, և՛ նկարիչ, և՛ քանդակագործ:

125. Ո՞ր վանքում է գտնվում «Մագիստրոսի ճեմարան» լսարանը:

126. Որտե՞ղ է գտնվում նշանավոր կրոնական և գիտակրթական կենտրոն Կեչառիսի վանքը:

127. Ո՞րն է խաչքարային արվեստի նշանավոր բացօթյա թանգարան-գերեզմանոցը՝ 2005 թվականին բարբարոսաբար ոչնչացված ադրբեջանցիների կողմից:

128. Ալեքսանդր Թամանյանի ո՞ր ստեղծագործությունն է 1937թ. Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում մեծ ոսկե մեդալ «Գրանտ Պրի» ստացել:

129. Ո՞վ է Երևանի Մատենադարանի, ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ Նախագահի նստավայրի շենքերի հեղինակը:

130. Ո՞վ է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի և Բյուրականի աստղադիտարանի շենքերի հեղինակը:

131. Ո՞վքեր են Երևանի «Մայր Հայաստան» հուշարձանի հեղինակները:

132. Ո՞վ է կառուցել Հռիփսիմեի տաճարը:

133. Ո՞ւմ մեկենասությամբ են կառուցվել Հաղպատն ու Սանահինը:

134. Ո՞ւմ հովանավորությամբ է կառուցվել Անիի Մայր տաճարը:

135. Ո՞վ էր Աղթամարի հռչակավոր ճարտարապետը:

136. Ո՞վ էր Կիլիկյան Հայաստանի ամենահայտնի մանրանկարիչը:

137. Ու՞մ նախագծով է կառուցվել Սարդարապատի հուշահամալիրը:

138. Երբ՞ է բացվել Ծիծեռնակաբերդի Մեծ եղեռնի զոհերի հուշարձանը:

139. Ո՞վ է հայ դասական երաժշտության հիմնադիրը:

140. Ո՞վ է «Անուշ» օպերայի հեղինակը և ո՞ր պոեմի հիման վրա է այն ստեղծվել:

141. Ի՞նչ է շարականը:

142. Ո՞վ է մշակել «Կռունկ» երգը:

143. Ո՞վ է «Ալմաստ» օպերայի հեղինակը: Ո՞վ է Հայաստանի Հանրապետության պետական հիմնի երաժտության հեղինակը:

144. Ո՞վ է հանրահայտ «Սպարտակ» բալետի հեղինակը:

145. Ո՞վ է«մեր երգի Մեսրոպ Մաշտոց» (Պ. Սևակի բնորոշմամբ), որը հավաքեց, գրի առավ և օտար տարրերից մաքրեց ավելի քան 3000 երգ:

146. Ո՞րն է աշխարհահռչակ նկարիչ Արշիլ Գորկիի ծննդավայրը:

147. Ո՞վ է «Վարդան Մամիկոնյան» հուշարձանի հեղինակը:

148. Երևանի ո՞ր թանգարանում է պահվում Մշո Ճառընտիրը:

149. Ո՞ր թվականին է հիմնադրվել Հայաստանի Ազգային Պատկերասրահը:

150. 20-րդ դարի հայ նկարիչ Ջիոտտոյի իրական անունը:

151. Հայ մեծ նկարիչ, ով թարգմանել է Շեքսպիրի անմահ ստեղծագործությունները:

152. Բագրատունիների խորհրդանիշը (բազմիցս հանդիպում ենք հայ արվեստում):

153. Ինչպե՞ս են անվանում հայկական մանրանկարչության մեջ հաճախ հանդիպող, մարդկային դեմքով թռչուններին:

154. Ո՞վ է նկարել «Նոյը իջնում է Արարատից » ստեղծագործությունը:

155. Հայ ո՞ր թագավորին է պատկերել Թորոս Ռոսլինը:

156. Իտալական Վերածննդի մեծագույն վարպետ, որը Որդան Կարմիր և Հայկական Կավ է օգտագործել իր ստեղծագործություններում:

157. Ո՞րտեղ է պահվում Անահիտ աստվածուհու բրոնզաձույլ արձանի գլուխը:

158. Հայկական տպագիր Աստվածաշնչի համար (1666-1668-թ) ո՞ր մեծանուն գերմանացի նկարիչն է կատարել նկարազարդումներ:

159. Ֆրանսահայ քանդակագործ, «Սալոմե» քանդակի հեղինակը:

160. Ո՞վ է ՀԽՍՀ գերբի հեղինակ գեղանկարիչը:

161. Գիտության ո՞ր բնագավառի ներկայացուցիչ էր Հրաչյա Աճառյանը:

162. Ո՞ր բնագավառի ներկայացուցիչներ են Վահրամ Փափազյանը, Հրաչյա Ներսիսյանը, Ավետ Ավետիսյանը:

163. Ե՞րբ է ստեղծվել ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիան:

164. Ո՞վ էր ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի առաջին նախագահը:

165. Գիտության ո՞ր բնագավառի ներկայացուցիչ էր Վիկտոր Համբարձումյանը:

166. Որտե՞ղ հիմնեց հայագիտական ամբիոն և մինչև կյանքի վերջն այն ղեկավարեց Նիկողայոս Ադոնցը:

167. Ո՞վ է «Վարք Մաշտոցի» երկի հեղինակը:

168. Ի՞նչ երկով է հայտնի Եզնիկ Կողբացին:

169. Ո՞րն է Դավիթ Անհաղթի գլուխգործոցը:

170. Ո՞ր դարում է ապրել Անանիա Շիրակացին:

171. Ո՞ր գիտնական-փիլիսոփան է հիմնել Գլաձորի համալսարանը:

172. Ո՞ր թվականին է հիմնադրվել Երևանի համալսարանը:

173. Ու՞մ անունն է կրում Երևանի պետական բժշկական համալսարանը:

174. Ո՞վ է ստեղծել հայոց առաջին դատաստանագիրքը:

175. Հայ գիտնական, որը հիմնադրել է ստորջրյա հնագիտությունը:

176. Հայ արևելագետ, որը 1934-1951թթ. եղել է Էրմիտաժի տնօրենը:

177. Ե՞րբ է ստեղծվել Հայաստանի պատմության թանգարանը:

178. Ո՞ր թվականին է բացվել Աստրախանի Աղաբաբյան դպրոցը:

179. Ո՞ր թվականին է հիմնվել Ներսիսյան դպրոցը:

180. Հայերեն առաջին գիրքը ե՞րբ և որտե՞ղ է տպագրվել:

181. Հայաստանում ե՞րբ և որտե՞ղ է հիմնվել առաջին տպարանը:

182. Ո՞վ և ե՞րբ է ստեղծել հայկական այբուբենը:

183. Ո՞ր գիրքն է առաջինը թարգմանվել հայերեն:

184. Որտե՞ղ է գտնվում Մխիթարյանների միաբանությունը և ո՞վ է եղել նրա հիմնադիրը:

185. Ե՞րբ է հիմնադրվել Մոսկվայի Լազարյան ճեմարանը:

186.Ո՞վ էր հայոց դիցարանում գրի ու գրականության հովանավոր աստվածը:

187.Ո՞վ «Մատյան ողբերգության» պոեմի հեղինակը:

188.Գրական ո՞ր ժանրի հեղինակը դարձավ Ներսես Շնորհալին:

189.Ո՞վ է հայ աշուղական գրականության մեծագույն գործիչը:

190.Ո՞ր իրադարձությունն է ընկած Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեական» և Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմների հիմքում:

191.Ո՞ր երկրում էր ապրել և ստեղծագործել Վիլյամ Սարոյանը:

192.Ո՞ւմ կողմից է առաջին անգամ գրառվել «Սասնա ծռեր» դյուցազնավեպը:

193.Գրական ո՞ր ժանրի ներկայացուցիչ է Հակոբ Պարոնյան:

194.Ո՞վ է մեծարվել «Ամենայն հայոց բանաստեղծ» տիտղոսով:

195.Ռաֆֆու ո՞ր վեպի նյութ են դարձել 18-րդ դարասկզբի հայ ազատագրական շարժումները Սյունիքում:

196. «Վարդանանք» պատմավեպը գրելիս Դերենիկ Դեմիրճյանի համար ո՞ր պատմիչի երկն է գլխավոր սկզբնաղբյուր դարձել:

197.Հայ ո՞ր գրողն է բարձրացել Արարատի գագաթը:

198.Ո՞ր երկրում է ապրում և ստեղծագործում Շառլ Ազնավուրը:

199.Ի՞նչ ընդհանուր ճակատագիր ունեցան Եղիշե Չարենցը ու Ակսել Բակունցը:

200.Ի՞նչ գիտեք Արտեմ և Աբրահամ Ալիխանյանների մասին:

II ՄԱԿԱՐԴԱԿ
(բանավոր փուլի համար)

1. Ո՞ր բարձրավանդակների միջև է գտնվում Հայկական լեռնաշխարհը:
2. Նշեք Հայկական լեռնաշխարհի խոշորագույն երեք լճերը, ներկայացրեք դրանք /պատմական անունները, ջրի տեսակը, կենդանական աշխարհը, կղզիները/:
3. Նշեք Հայկական լեռնաշխարհի խոշորագույն հինգ գետերը, ներկայացրեք դրանք /որտեղի՞ց են սկիզբ առնում և ո՞ր ծովերն են թափվում/:
4. Ներկայացրեք պատմական Հայաստանի 2 հիմնական վարչական բաժանումները՝ Մեծ Հայքը և Փոքր Հայքը:
5. Ի՞նչ գիտեք հնագույն հայկական թագավորության՝ Արատտայի /Ք.ա. XXVIII-XXVII դդ./ մասին:
6. Ներկայացրեք Հայասա թագավորությունը /տարածքը և հիմնական ժամանակագրությունը/:
7. Ներկայացրեք Նաիրյան երկրները /տարածքը և հիմնական ժամանակագրությունը/: Ե՞րբ դրանք վերածվեցին միասնական պետության:
8. Ի՞նչ գիտեք Մենուա արքայի նվաճումների և տնտեսական մեծ գործերի մասին:
9. Նշեք Արգիշտի 1-ինի նվաճումների սահմանները:
10. Ի՞նչ է հաղորդում Մովսես Խորենացին Պարույր Հայկազունու մասին:
11. Ի՞նչ անուններով է հիշատակվում Հայաստանը Բեհիսթունյան արձանագրության մեջ:
12. Ո՞ր մատենագիրն է վկայում Հայաստանի մասին Ք.ա. 401 թվականին: Ի՞նչ մանրամասներ գիտեք այդ մասին:
13. Ե՞րբ է տեղի ունեցել Մագնեսիայի ճակատամարտը և ի՞նչ անդրադարձ է ունեցել Հայաստանի ճակատագրում:
14. Ի՞նչ բարեփոխումներ է կատարել Արտաշես I-ը:
15. Նշեք Տիգրան Մեծի աշխարհակալության սահմանները:
16. Ովքե՞ր էին Տիգրան Մեծի նշանակած կառավարիչները Ասորիքում և Հյուսիսային Միջագետքում:
17. Ե՞րբ և ո՞ւմ միջև ստորագրվեց Արտաշատի պայմանագիրը: Ինչո՞ւ Տիգրան Մեծը գնաց զիջումների:
18. Ե՞րբ և ինչպե՞ս գերվեց Արտավազդ II արքան: Ի՞նչ վեհանձն արարքով աչքի ընկավ Արտավազդ II-ը ընտանիքը գերության մեջ:
19. Ովքե՞ր էին իշխում Հայաստանում Արտաշեսյան արքայատոհմի անկումից հետո: Նշեք նրանցից ամենանշանավորին:
20. Ինչպե՞ս ավարտվեց 54-64 թթ. պատերազմը Հռոմի և հայ-պարթևական ուժերի միջև: Ներկայացրեք Հռանդեայի պայմանագիրը:

21. Ի՞նչ տիտղոսներ էին կրում հայոց արքաները:
22. Մեծ Հայքում ո՞վ էր երկրի հոգևոր առաջնորդը, ուրիշ ի՞նչ պաշտոն էր նա զբաղեցնում:
23. Հին Հայաստանի պետական կառավարման համակարգում ի՞նչ գործակալություններ գիտեք:
24. Ո՞ր առաքյալներն են քարոզել Հայաստանում:
25. Ի՞նչ կարևոր փոփոխություն է Պապ թագավորը կատարել կապված կաթողիկոսության հետ:
26. Հայերից բացի, ո՞ր ժողովուրդների համար է գրեր ստեղծել Մեսրոպ Մաշտոցը:
27. Ի՞նչ արդյունքով ավարտվեց 450-451 թթ. ազատագրական պայքարը:
28. Ի՞նչպես սկսվեց 481-484թթ. ապստամբությունը Հայաստանում:
29. Ե՞րբ ճանաչվեց Աշոտ I Բագրատունին թագավոր: Ո՞վ էր այդ ժամանակ Բյուզանդիայի կայսրը:
30. Ի՞նչ հայտնի գործեր է կատարել Աշոտ III Ողորմածի կին Խոսրովանույշ թագուհին:
31. Ի՞նչ դերակատարում ունեին Պահլավունիները Բագրատունյաց թագավորության շրջանում:
33. Զաքարյան իշխանության օրոք ո՞ր տարածքներին էին իշխում Վաչուտյան, Պռոշյան, Օրբելյան և Հասան-Ջալալյան իշխանական տները:
34. Ե՞րբ է իշխել Թորոս II-ը և ի՞նչ ձեռքբերումների է հասել:
35. Ի՞նչ տիտղոս էր կրում Լևոն II-ը: Ո՞ւմ հետ է առևտրական պայմանագրեր կնքել նա:
36. Ինչպե՞ս Հեթումյանները հաստատվեցին Կիլիկյան Հայաստանի գահին:
37. Ո՞ւմ միջև է կնքվել հայ-մոնղոլական դաշնագիրը:
38. 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի արդյունքում հայկական ո՞ր տարածքներն անցան Ռուսաստանին:
39. Ե՞րբ է միջազգայնացվել Հայկական հարցը:
40. Ի՞նչ խմբակներ ու կազմակերպություններ ստեղծվեցին Հայաստանում 1860-1880-ական թվականներին:
41. Ի՞նչ է ֆիդայական (հայդուկային) շարժումը: Նշեք ֆիդայական պայքարի առնվազն հինգ նշանավոր գործչի անուն:
42. Հայկական քանի՞ կամավորական գունդ ստեղծվեց Առաջին աշխարհամարտի ժամանակ: Ո՞րն էր ամենամեծը, ո՞վ էր այդ գնդի հրամանատարը:
43. Ի՞նչ է պանթուրքիզմը:
44. Ե՞րբ է տեղի ունեցել Սալոնիկի գաղտնի ժողովը և ի՞նչ որոշում է ընդունել:
45. Ինչքա՞ն էր հայերի կրած նյութական վնասը (ավերված քաղաքները, եկեղեցիները, դպրոցները, ոչնչացված և բռնագրաված սեփականությունը՝ արտահայտված ժամանակի դրամական միավորներով):
46. Ե՞րբ է տեղի ունեցել Վանի 1915 թ. ինքնապաշտպանությունը:
47. Ի՞նչ պատմական նշանակություն ունեցան 1918թ. մայիսյան հերոսամարտերը:
48. Ովքե՞ր էին Հայաստանի Հանրապետության (1918-1920թթ.) զինանշանի հեղինակները: Բացատրեք զինանշանի խորհրդանշանները:
49. Ովքե՞ր էր հայությանը ներկայացնում Փարիզի վեհաժողովում:
50. Ե՞րբ են տեղի ունեցել Փարիզի վեհաժողովը և Սան Ռեմոյի կոնֆերանսը: Հայության հետ կապված ի՞նչ հարցեր են քննարկվել:
51. Ե՞րբ է ղեկավարել Զանգեզուրի ինքնապաշտպանությունը Գարեգին Նժդեհը:

52. 1921թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով հայկական ո՞ր տարածքներն օտարվեցին Հայաստանից:
53. Ե՞րբ է կազմավորվել ԽՍՀՄ-ը: Քանի՞ տարվա կյանք ունեցավ այն:
54. Խորհրդային բանակի կազմում ընդհանուր առմամբ քանի հայ զինվորական է մասնակցել Երկրորդ աշխարհամարտին: Խորհրդային Միության քանի՞ հերոս, մարշալ և ծովակալ տվեց հայ ժողովուրդը:
55. Ի՞նչ կարևոր ներդրում ունեցան հայերը Ֆրանսիայի Դիմադրության շարժման մեջ:
56. Ի՞նչ գիտեք Սփյուռքում հանուն Հայ Դատի ծավալված զինյալ պայքարի մասին (Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ (ASALA), Հայոց ցեղասպանության արդարության մարտիկներ և այլն):
57. Ի՞նչ էր ազդարարում 1990թ. օգոստոս 23-ի հռչակագիրը: Ե՞րբ է տեղի ունեցել Հայաստանի Հանրապետության անկախության հանրաքվեն:
58. Ե՞րբ է Հայաստանի Հանրապետությունը դարձել ՄԱԿ-ի լիիրավ անդամ:
59. Արցախյան հերոսամարտի սփյուռքահայ ի՞նչ հերոսներ գիտեք:
60. Հայոց եկեղեցին քանի՞ կաթողիկոսական և հայրապետական աթոռներ ունի այսօր: Նշեք դրանք:

Հայ մշակույթի պատմության հարցաշար

1. Թվարկել միջնադարյան Հայաստանի խոշորագույն ճարտարապետ Տրդատի կառուցած տաճարները:
2. Հայկական խոշորագույն վանքերում «աշխարհիկ բնույթի» ի՞նչ շենքեր են կառուցվել:
3. Որո՞նք են Կիլիկյան հայկական թագավորության նշանավոր ամրոցները:
4. Մեծանուն հայերից ու՞մ կարող ենք տեսնել Գրիգոր Խանջյանի «Վարդանանք» մեծադիր ստեղծագործության մեջ:
5. «Սասնա Ծռեր» էպոսի ինչպիսի՞ նկարազարդողներ գիտեք:
6. Հայկական գորգերի քանի տեսակ կարո՞ղ եք նշել:
7. Ի՞նչ գիտեք Արդինի-Մուսասիրի տաճարի մասին:
8. Ո՞րն է Վանի թագավորության ամենամեծ սեպագիր արձանագրությունը և ո՞ր արքայի ժամանակաշրջանի պատմությանն է նվիրված:
9. Ո՞վ է գրել Տիգրան Մեծի պատմությունը: Ինչ գիտեք այդ գործի ճակատագրի մասին:
10. Ըստ ավանդության՝ ո՞ր իրադարձությունից սկսած են մեր նախնիները հաշվել Հայոց Բուն տոմարը:
11. Նկարագրեք Գառնիի տաճարը:
12. Ո՞ր աստվածների արձաններն են կանգնեցված Նեմրութի սրբավայրում: Ի՞նչ գիտեք այդ սրբավայրի մասին:
13. Ո՞ր իրադարձությունների մասին է պատմում Ագաթանգեղոսը:
14. Ի՞նչ գիտեք Մովսես Խորենացու մասին: Քանի՞ գրքից է բաղկացած նրա «Հայոց պատմություն» աշխատությունը:

15. Ո՞վ է «Վարք Մաշտոցի» երկի հեղինակը, ի՞նչ գիտեք նրա մասին:
16. Պատմեք Անանիա Շիրակացու տիեզերագիտական հայացքների մասին:
17. Ի՞նչ գիտեք Երուսաղեմի հայկական եկեղեցիների խճանկարների մասին:
18. Ի՞նչ գիտեք վարդապետարանների մասին:
19. Ե՞րբ և ու՞մ կողմից է հիմնվել Գլաձորի համալսարանը: Ովքե՞ր էին ֆինանսավորում համալսարանի գործունեությունը:
20. 9-13-րդ դարերում ովքե՞ր են գրել «տիեզերական» պատմություններ:
21. Ի՞նչ գիտեք Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» մասին:
22. Ի՞նչ գիտեք Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» մասին:
23. Ովքե՞ր էին 9-14-րդ դարերում ապրած երկու նշանավոր առակագիրները:
24. Ի՞նչ գիտեք Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու մասին:
25. Ո՞ր խաչքարերն էին կոչվում «Ամենափրկիչ»:
26. Ներկայացրեք Միքայել Չամչյանցի գլուխգործոցը:
27. Ե՞րբ է լույս տեսել «Նոր բառգիրք հայկազյան լեզվի» կոթողային աշխատությունը, ի՞նչ գիտեք դրա մասին:
28. Ո՞վ է հայկական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիրը, ո՞րն է նրա գլուխգործոցը:
29. Ե՞րբ և որտե՞ղ է առաջին անգամ ներկայացվել Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան:
30. Նշեք աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու հայկական թեմաներով նկարներից առնվազն երեքը:

ՀԱՐՑԱՇԱՐ
Հայոց եկեղեցու պատմության մրցույթի

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ

1) Քանի՞ մասերից է բաղկացած Աստվածաշունչը:
2) Քանի՞ գրքերից է բաղկացած Հին Կտակարանը:
3) Քանի՞ գրքերից է բաղկացած Նոր Կտակարանը:
4) Ինչպե՞ս են կոչվում Նոր Կտակարանի առաջին 4 գրքերը:
5) Ովքե՞ր էին առաջին մարդիկ և ինչի՞ց էին արարված:
6) Ո՞րն էր Աստծո և Նոյի միջև կնքված ուխտի երևելի նշանը, որ Աստված այլևս աշխարհը ջրհեղեղով չի կործանի:
7) Ի՞նչ անուններով է հայտնի Հայաստանն Աստվածաշնչում:
8) Աստված ու՞մ միջոցով և որտե՞ղ տվեց 10 պատվիրանները:
9) Ու՞մ էր վիճակված կառուցել Աստծո տաճարը:
10) Թարգմանաբար ի՞նչ է նշանակում Հիսուս:
11) Երկնային փառաբանական ձայնով ովքե՞ր առաջինն իմացան Քրիստոսի ծննդյան լուրը:
12) Ներկայացնել Հիսուս Քրիստոսի փորձությունները:
13) Ո՞վ էր Մատաթիան:
14) Քանի՞ արծաթով մատնվեց Քրիստոս:
15) Հարությունից հետո Հիսուս քանի՞ օր մնաց երկրի վրա:

ԵԿԵՂԵՑԱԲԱՆԱԿԱՆ

1) Հայ եկեղեցու քանի՞ նվիրապետական աստիճաններ կան: Թվել հերթականությամբ:
2) Ինչպե՞ս են դիմում ամուսնացած և կուսակրոն քահանաներին:
3) Ի՞նչ է թեմը: Թվարկեք նվազագույնը հինգ թեմեր:
4) Նշեք Ամենայն Հայոց 132-րդ կաթողիկոսի անունը :
5) Նշեք Հայ եկեղեցու խորհուրդները:
6) Քրիստոնյա լինելու համար ո՞ր խորհուրդն է անհրաժեշտ:
7) Հայ Առաքելական եկեղեցու խորհուրդներից որո՞նք են կրկնելի:
8) Ինչպե՞ս է կատարվում Հայոց կաթողիկոսի ընտրության և ձեռնադրության կարգը:
9) Ի՞նչ է նարոտը և ե՞րբ է օգտագործվում:
10) Ե՞րբ է կատարվում հաղորդության խորհուրդը:
11) Ի՞նչ է անհրաժեշտ հաղորդության խորհրդին մասնակցելու համար:
12) Ի՞նչ են խորհրդանշում պսակի խորհուրդի ժամանակ նորապսակների մատներին դրվող մատանիները:
13) Ի՞նչ են խորհրդանշում պսակի խորհուրդի ժամանակ նորապսակների գլխին դրվող թագերը:

14) Ո՞վ է հաստատել հաղորդության խորհուրդը:
15) Ի՞նչ նյութով է կատարվում մկրտության խորհուրդը:
16) Ի՞նչ նյութով է կատարվում դրոշմի խորհուրդը:
17) Քանի՞ զգայարաններ ու մարմնի մասեր են դրոշմվում:
18) Եկեղեցու ո՞ր մասում է գտնվում մկրտության ավազանը:
19) Ի՞նչ է հիվանդաց կարգը:
20) Ինչպե՞ս են խաչակնքում:
21) Մարդը քանի՞ անգամ կարող է մասնակցել ապաշխարության խորհրդին:

ԾԻՍԱԿԱՆ

1. Քանի՞ տեսակ են Հայոց եկեղեցու տոները և ո՞րն է դրանց տարբերությունը:
2. Ո՞ր տոներն են կոչվում տերունական:
3. Քանի՞ տաղավար տոն ունի Հայոց եկեղեցին. Որո՞նք են:
4. Ի՞նչ է պահքը կամ պասը:
5. Հայոց եկեղեցին ե՞րբ է նշում Սուրբ Ծնունդը:
6. Ու՞մ է նվիրված Ավետման տոնը:
7. Հայոց եկեղեցին ե՞րբ է նշում Ավետման տոնը:
8. Ե՞րբ է կատարվում ջրօրհնեքի արարողությունը:
9. Հայոց եկեղեցին երբ է նշում Տյառնընդառաջը և ինչ անունով է հայտնի ժողովրդի մեջ:
10. Ո՞րն է Տյառնընդառաջի իմաստը:
11. Պայծառակերպության դրվագում Քրիստոսի աշակերտներց ովքե՞ր էին ականատեսները:
12. Հայոց եկեղեցին ե՞րբ է նշում Ծաղկազարդը:
13. Ինչպե՞ս է տոնվում Ծաղկազարդը:
14. Ներկայացրեք Սուրբ Հարության տոնի իմաստը:
15. Ի՞նչ արարողություն է տեղի ունենում Սուրբ Հարության տոնին նախորդող երեկոյան:
16. Ինչպե՞ս են մարդիկ ողջունում իրար Սուրբ Հարության տոնի օրը:
17. Ինչպե՞ս է կոչվում Ծաղկազարդին հաջորդող շաբաթը:
18. Որտեղի՞ց համբարձվեց Հիսուս Քրիստոսը:
19. Հայոց եկեղեցին ե՞րբ է նշում Համբարձման տոնը:
20. Ի՞նչ է կատարվում Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնի օրը:
21. ՈՒ՞մ է նվիրված Խաղողօրհնեքի տոնը:
22. Ի՞նչ է նշանակում Խաչվերաց և տոնն այլ ի՞նչ անունով է հայտնի:
23. Հայոց ո՞ր կաթողիկոսն է Սուրբ Սարգսի տոնը հռչակել երիտասարդների օրհնության օր:
24. Ե՞րբ է տոնվում սրբոց Վարդանանց տոնը:
25. Հայոց ո՞ր կաթողիկոսն է սահմանել Վարագա Սուրբ Խաչի տոնը:
26. ՈՒ՞մ է նվիրված Սրբոց թարգմանչաց տոնը և երբ է նշվում:

ՊԱՏՄԱԿԱՆ

1. Ո՞վ էր առաջին Հայոց քրիստոնյա արքան:
2. Ովքե՞ր են տարածել քրիստոնեությունը Հայաստանում:
3. Ո՞ր առաքյալն է Հայաստանում հիմնել առաջին եպիսկոպոսական աթոռը:
4. Ինչպե՞ս է կոչվում Հայաստանում Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների հանդիպման վայրը:
5. Ո՞րն է աշխարհում քրիստոնեությունն առաջինը պետականորեն ընդունած պետությունը, նշել թվականը:
6. Ո՞վ էր Հայոց առաջին կաթողիկոսը:
7. ՈՒ՞մ օրոք է քրիստոնեությունն Հայաստանում հռչակվել պետական կրոն:
8. Ովքե՞ր էին Հռիփսիմյան կույսերը:
9. Ե՞րբ է կառուցվել Մայր Տաճարը:
10. Ո՞վ հաջորդեց Ս. Գրիգոր Լուսավորչին:
11. Ե՞րբ, որտե՞ղ և ու՞մ կողմից է գումարվել Հայոց առաջին ազգային եկեղեցական ժողովը:
12. Հայոց ո՞ր կաթողիկոսն է հայտնի “Հայոց հայր”, “Սրտերի լուսավորիչ” պատվանուններով:
13. Ո՞վ է ստեղծել Հայոց այբուբենը և ո՞ր թվականին:
14. Հայոց եկեղեցին քանի՞ տիեզերական ժողովներ է ընդունում. Նշել թվականները և վայրերը:
15. Ո՞վ է Նիկիո հանգանակը Հայաստան բերել, ե՞րբ:
16. Ո՞ր տիեզերաժողովում է ընդունվել “Մի աստվածություն, երեք անձիք” բանաձևը:
17. Պատմեք Ավարայրի ճակատամարտ:
18. 9-րդ դարում կաթողիկոսներից ո՞վ մեկ օրում ստացավ հոգևոր բոլոր աստիճանները:
19. Ի՞նչ գիտեք Մաշտոց Ա Եղիվարդեցի կաթողիկոսի մասին:
20. Ի՞նչ վերաբերմունք էր դրսևորում Հայոց Անանիա Մոկացի կաթողիկոսը բռնությամբ քաղկեդոնական դարձած հայերի նկատմամբ:
21. Հայոց ո՞ր մայրաքաղաքն էր հայտնի “Հազար ու մի եկեղեցիների քաղաք” անունով:
22. Ինչու՞ է Պետրոս կաթողիկոսը հայտնի “Գետադարձ” մականունով:
23. Հայոց առաջին տպագիր գիրքը. ու՞մ կողմից է տպագրվել, ո՞ր թվականին:
24. Ե՞րբ է հիմնադրվել Սինոդը, ու՞մ կողմից:
25. Ո՞րն էր Սինոդի դերը:
26. Ո՞ր կաթողիկոսն է առաջինը կոչվել թվահամարով:
27. Հայոց ո՞ր կաթողիկոսն է արժանացել Ալեքսանդր Նևսկու շքանշանին և ինչու՞:
28. Ե՞րբ է հիմնադրվել Գևորգյան հոգևոր ճեմարանը, ու՞մ կողմից:
29. Նկարագրեք “Երկաթե շերեփի” պատմությունը:
30. Ինչու՞ էր Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան 1915թ. դեկտեմբերի 1-ի իր հեռագրում նշել, որ “Հայ հոգևորականությունը պետք է ոչնչացվի առաջին հերթին”:
31. Հայոց ո՞ր կաթողիկոսին են խեղդամահ արել իր աշխատասենյակում:

32. Կաթողիկոս, ով հայտնի է “Շինարար” պատվանունով:
33. Ո՞վ է այսօր Հայոց կաթողիկոսը և թվով որերորդն է:

ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ

1. Ո՞ր պատվիրաններն են համարվում քրիստոնեական բարոյախոսության հիմքը:
2. Որո՞նք են քրիստոնեական բարոյագիտության երեք հիմնական դրսևորումները:
3. Ո՞րն է մարդու գոյության խնդիրը:
4. Թվարկեք առաքինություններն ու մոլությունները:
5. Ո՞րն է մեղքերից առաջինը և մեծագույնը:
6. Ողորմության քանի՞ տեսակ է առանձնացնում Ս. Գրիգոր Տաթևացին: Որո՞նք են:
7. Ո՞րն է Ոսկե կանոնը:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ

1. Ինչպե՞ս են ձևավորվում արժեքները:
2. Ինչպի՞ն են հայերը հավատքով և ինչպիսիսն՝ դավանանքով:
3. Հայոց եկեղեցու արժեքային համակարգի մեջ ո՞ր կարևորագույն հատկանիշներն են ներառված և ովքե՞ր են դրանց խորհրդանիշ սրբերը:
4. Ինչի՞ համար է զենքն ըստ Ս. Գրիգոր Տաթևացու:
5. Ո՞րն է պետականության բարձրագույն աստիճանը:
6. Ազգային-պետական միասնության ապահովման համար հայոց արժեհամակարգում ինչպիսի՞ սկզբունքներ են կարևորվում:
7. Ինչպե՞ս է բնութագրում Աստծուն Ագաթանգեղոսը իր “Հայոց պատմություն” աշխատասիրության մեջ:
8. Ի՞նչ ենթաբաժիններ ունի սրբախոսությունը, որն է դրանց տարբերությունը:
9. Ո՞րն է Քրիստոնեության խորհրդանիշը:
10. Խաչքարի ո՞ր տեսակն է կոչվում “Ամենափրկիչ”:
11. Ինչպե՞ս են կոչվում խաչքարեր կերտող քանդակագործ-վարպետները:
12. Ինչպե՞ս են կոչվում եկեղեցական կանոնական երգերը: